
 ԶՈՒՆԻԲԱՆԿ	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. <<ՅՈՒՆԻԲԱՆԿ>> ԲԲԸ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿԸ .....	2
ԳԼՈՒԽ 2. ԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	2
ԳԼՈՒԽ. 3. ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	4
ԳԼՈՒԽ 5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....	20
ԳԼՈՒԽ 6 ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ .....	22
Հավելված 1.....	23
Հավելված 2 .....	24
Հավելված 3 .....	25
Հավելված 4 .....	28
Հավելված 5 .....	30
Հավելված 6 .....	32
Հավելված 7 .....	32
Հավելված 8 .....	34
Հավելված 9 .....	35
Հավելված 10.....	36

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի**

**ԳԼՈՒԽ 1. <<ՅՈՒՆԻԲԱՆԿ>> ԲԲԸ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿԸ**

<<Յունիբանկ>> բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) <<Բրոքերային գործառնությունների իրականացման կարգը (այսուհետ՝ Կարգ) մշակված է Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրությանը, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերին և Բանկի կանոնադրությանը համապատասխան, ինչպես նաև <<ՆԱՍԴԱՔ ՕՍԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ>>ԲԲԸ (այսուհետև նաև՝ կարգավորվող) և Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա ԲԲԸ կանոններին, և այլ իրավական ակտերին համապատասխան:

**ԳԼՈՒԽ 2. ԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

<<Բրոքերային ծառայություններ>>. Ընկերության կողմից Հաճախորդներից արժեթղթերով և/կամ արտարժույթով առք/վաճառքի գործարքների կատարման պատվերների ընդունման և հաղորդման, ինչպես նաև իր կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին արժեթղթերով և/կամ արտարժույթով առք/վաճառքի գործարքների կատարման հետ կապված ծառայություններ:

<<Բրոքերային գործարք>>. Ընկերության կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին արժեթղթերով և/կամ արտարժույթով կատարվող գործարք:

<<Դիլերային գործարք>>. Ընկերության հաշվին և Ընկերության անունից արժեթղթերով և/կամ արտարժույթով կատարվող գործարք:

<<Արժեթուղթ>>. <<Արժեթղթերի շուկայի մասին>> ՀՀ Օրենքի 3-րդ հոդվածի 1-6 կետերով սահմանված միջոցները:


<<Արտարժույթ>>. <<Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված միջոցները:

<<Հաճախորդ>>. անձ, որն օգտվում է Ընկերության բրոքերային ծառայություններից, կամ որը դիմել է Ընկերությանը՝ բրոքերային ծառայություններից օգտվելու նպատակով.

<<Պայմանագիր>>. բրոքերային ծառայություններից օգտվելու համար Ընկերությանը դիմած անձի և Ընկերության միջև կնքված փաստաթուղթ, որում ներառվում են տվյալ անձի արժեթղթերով և/կամ արտարժույթով գործարքի կնքման և կատարման հետ կապված կողմերի իրավունքներն ու պարտականությունները.

<<Բրոքեր>>. Ընկերության աշխատակից, որն Ընկերության կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով և/կամ արտարժույթով գործարքներ է կատարում և ընդունում ու հաղորդում է հաճախորդներից արժեթղթերով և/կամ արտարժույթով գործարքների կատարման հանձնարարականներ.

<<Պատվեր(հայտ)>>. բրոքերային գործարքների կնքման նպատակով Ընկերությանը ներկայացվող հաճախորդի հանձնարարականը, ինչպես նաև Ընկերության կարգադրությունը, հանձնարարությունը, հայտը կամ առաջարկը.

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի**

**<<Հայտերի հերթ>>**. Բրոքերի կողմից մուտքագրված և դեռևս չբավարարված հայտերի՝ որոշակի հատկանիշի (հատկանիշների) հիման վրա կանոնակարգված հաջորդականություն.

**<<Բավարարել լրիվ>>** պատվեր. հաճախորդի կողմից Ընկերության տրվող պատվերում նշված հանձնարարական, որը նախատեսում է պատվերի կատարում բացառապես դրանում նշված քանակով արժեթուղթ և/կամ արտարժույթ գներու կամ վաճառելու պայմանով.

**<<Բավարարել մասնակի>>** պատվեր. հաճախորդի կողմից Ընկերության ներդրումային գործառնությունների բաժնին տրվող պատվերում նշված հանձնարարական, որը նախատեսում է պատվերի կատարումը մասնակիորեն՝ մնացորդը հայտերի հերթում ընդգրկելու պայմանով.

**<<Հանել մնացորդ>>** պատվեր. հաճախորդի կողմից Ընկերությանը տրվող պատվերում նշված հանձնարարական, որը նախատեսում է պատվերի անմիջապես կատարում դրանում նշված արժեթղթի քանակի և/կամ արտարժույթի ծավալի հնարավոր առավելագույն չափով՝ մնացորդը հայտերի հերթում չընդգրկելու պայմանով.

**<<Անմիջապես բավարարել կամ հանել>>** պատվեր. հաճախորդի կողմից Ընկերությանը տրվող պատվերում նշված հանձնարարական, որը նախատեսում է պատվերի անմիջապես կատարում՝ պատվերում նշված գնով և լրիվ քանակով, հակառակ դեպքում չի ընդգրկվում հայտերի հերթում.

**<<Պահել հերթում մինչև բավարարումը>>** պատվեր. հաճախորդի կողմից Ընկերությանը տրվող պատվերում նշված հանձնարարական, որը նախատեսում է, որ պատվերի հիման վրա կազմված հայտը կարող է մնալ հայտերի հերթում՝ մինչև պատվերում նշված լրիվ քանակով արժեթղթերի և/կամ արտարժույթի գնումը կամ վաճառքը.

**<<Շուկայական հանձնարարական>>**. հաճախորդի կողմից Ընկերությանը տրվող պատվերում նշված հանձնարարական, որը նախատեսում է պատվերի կատարում՝ տվյալ պահին շուկայում գոյություն ունեցող լավագույն գնով անմիջապես արժեթուղթ և/կամ արտարժույթ գներու կամ վաճառելու պայմանով.


**<<Գնման/վաճառքի լիմիտային պատվեր>>**. հաճախորդի կողմից Ընկերությանը տրվող պատվերում նշված հանձնարարական, որը նախատեսում է պատվերի կատարում՝ դրանում ֆիքսված գնից ոչ բարձր և/կամ ոչ ցածր գնով արժեթուղթ գներու (վաճառելու) պայմանով.

**<<Գնման/վաճառքի ստոպ պատվեր>>**. հաճախորդի կողմից Ընկերությանը տրվող պատվերում նշված հանձնարարական, որը նախատեսում է պատվերի կատարում՝ դրանում նշված գնին բորսայում կամ բորսայից դուրս տվյալ արժեթղթի գինը հասնելու դեպքում.

**<<Գնման/վաճառքի ստոպ լիմիտային պատվեր>>**. հաճախորդի կողմից Ընկերությանը տրվող պատվերում նշված հանձնարարական, որը միաժամանակ ներառում է գնման (վաճառքի) լիմիտային հանձնարարականը մի գնով և գնման (վաճառքի) ստոպ հանձնարարականը մեկ այլ գնով.

**<<Բորսայական գործարք>>**. Ընկերության կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին շուկայի օպերատորի կանոններով սահմանված կարգով կարգավորվող շուկայում կնքված գործարք.

**<<Արտարժույթային գործարք>>**. Ընկերության կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին կարգավորվող շուկայից դուրս կատարված գործարք:

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի**

**<<Գործարքի վավերագիր>>**. գործարքը կնքող բրոքերի կողմից կազմվող, գործարքի կնքումը հավաստող և հաշվապահության բաժին ներկայացվող փաստաթուղթ.

**<<Հաճախորդների միջոցների տիրապետում>>**. Ընկերության կողմից հաճախորդի միջոցների (արժեթղթեր և(կամ) դրամական միջոցներ) պահում կամ իր հաշվում հաշվառում կամ դրանք փաստացի տիրապետելու հնարավորություն:

**<<Սպասարկող բանկ>>**. բանկ, որում Ընկերությունը ունի դրամային և արտարժույթային հաշիվներ:

**<<Տեղեկատվության փոխանցման հուսալի միջոց>>**. ցանկացած միջոց, որը հաճախորդին հնարավորություն է տալիս ստամնալ և պահպանել անձնապես իրեն ուղղված տեղեկատվությունը, և որը հետագայում հնարավորություն կտա այն լիարժեք օգտագործել և պահպանված տեղեկատվությունը վերարտադրել :

Սույն կարգում կիրառվող այլ հասկացություններն ունեն **<<Արժեթղթերի շուկայի մասին>>** ՀՀ Օրենքի և դրա հիման վրա ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ ակտերով սահմանված նշանակությունները:

**ԳԼՈՒԽ. 3. ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**3.1 Հաճախորդներին տրամադրվող տեղեկատվությունը, պահանջվող տեղեկատվության կազմը և դրա ներկայացման կարգը՝ արժեթղթերով բրոքերային գործարքների իրականացման համար**


Նախքան բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի կնքումը և դրանց մատուցումը Ընկերությունը Հաճախորդին պետք է տրամադրի տեղեկատվություն հետևյալի մասին .

**3.1.1** Տեղեկատվություն Ընկերության և Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների մասին.

- Ընկերության անվանումը և կապի միջոցները;
- տեղեկատվություն, թե ինչ լեզուներով Հաճախորդը կարող է կապ հաստատել Ընկերության հետ և ստանալ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն;
- միմյանց հետ կապ հաստատելու և տեղեկատվություն փոխանակելու մեթոդները, ինչպես նաև պատվերների ընդունման և հաղորդման կարգը;
- այն հիմքերը, որոնց համաձայն Ընկերությունը իրավասու է մատուցել ներդրումային ծառայություններ, ինչպես նաև Ընկերությանը լիցենզավորած և (կամ) գրանցած իրավասու մարմնի անվանումը և կապի միջոցները;
- տեղեկատվություն Հաճախորդներին ներկայացվող հաշվետվությունների, դրանց ներկայացման հաճախականության և ժամկետների, ինչպես նաև ներկայացման կարգի մասին;
- շահերի բախման սահմանափակման քաղաքականության համառոտ նկարագիրը (Հաճախորդի պահանջի դեպքում՝ շահերի բախման քաղաքականության ամբողջ նկարագիրը):

**3.1.2** Տեղեկատվություն արժեթղթերի մասին.

- Ընկերությունը Հաճախորդին պետք է ներկայացնի տվյալ արժեթղթերի և դրանց հետ առնչվող ռիսկերի նկարագիրը: Այդ նկարագրով պարզ և հասկանալի ձևով ներկայացվում են յուրաքանչյուր

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի**

տեսակի (բաժնետոմս, պարտատոմս և այլն) արժեթղթի առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց առնչվող ռիսկերը:

- Եթե Ընկերությունը Հաճախորդին տրամադրում է տեղեկություններ այնպիսի արժեթղթերի մասին, որոնք այդ պահին հրապարակային առաջարկի առարկա են և այդ նպատակով ազդագիր է հրապարակվել, ապա նա Հաճախորդին պետք է տեղեկացնի, թե որտեղ է հրապարակված այդ ազդագիրը կամ որտեղից կարելի է այն ձեռք բերել:
- Այն դեպքերում, եթե արժեթղթից բխող ռիսկերը երաշխավորված են երրորդ անձի կողմից, Ընկերությունը Հաճախորդին պետք է ներկայացնի տեղեկատվություն երաշխավորության և երաշխավորություն տվողի մասին:
- Տեղեկատվություն գործարքի կնքման վայրի (միջոցի) մասին (ֆոնդային բորսա, այլ կարգավորվող շուկա կամ չկարգավորվող շուկա).
- Տեղեկատվություն համապատասխան ծախսերի և միջնորդավճարների մասին.
- տվյալ ծառայությունից օգտվելու համար Հաճախորդի կողմից վճարման ենթակա համախառն գումարը ներառյալ բոլոր միջնորդավճարները, ծախսերը և այլ վճարները, ինչպես նաև բոլոր հարկային վճարները, որոնք պահվում են Ընկերության կողմից՝ որպես հարկային գործակալ: Եթե հնարավոր չի լինում տեղեկացնել գանձման ենթակա ճշգրիտ գումարի մասին, ապա պետք է ներկայացնել հաշվարկման կարգը:
- վերոնշյալ համախառն գումարի որևէ մաս վճարվում է արտարժույթով կամ ներկայացված է արտարժույթով, ապա նշվում է արտարժույթը, փոխանակման կուրսը և դրա հետ կապված ծախսերը:
- վճարումներ կատարելու եղանակները:

**3.1.3** Ընկերության կողմից Հաճախորդին տրամադրվող ողջ տեղեկատվությունը (այդ թվում՝ գովազդային նյութերի տեղեկատվությունը) պետք է լինի պարզ, անկողմնակալ և չլինի ապակողմնորոշիչ:


**3.1.4** Եթե տեղեկատվությունում առանձնահատուկ շեշտադրվել են ներդրումային ծառայություններից կամ արժեթղթերից սպասվելիք օգուտները, ապա միաժամանակ պետք է ներկայացվի անկողմնակալ և աչքի ընկնող տեղեկատվություն համապատասխան ռիսկերի մասին:

**3.1.5** Տեղեկատվությունը պետք է հասկանալի լինի ներդրումների բնագավառում միջին մակարդակի գիտելիքներ և փորձ ունեցող մարդկանց համար:

**3.1.6** Տեղեկատվությունը չպետք է ներկայացվի այն ձևով, որ թաքցվեն կարևոր դրոյթները կամ նախազգուշացումները, ինչպես նաև տպավորություն ստեղծվի, որ դրանք ոչ կարևոր են:

**3.1.7** Այն դեպքերում, երբ տեղեկատվությունը պարունակում է համեմատություններ այլ անձանց հետ կամ այլ անձանց կողմից մատուցվող ներդրումային ծառայությունների հետ, ապա.

- այդ համեմատությունները պետք է լինեն տեղին և իմաստալից ու պետք է ներկայացվեն անկողմնակալ և հավասարակշռված ձևով;
- համեմատություններում պետք է նշվեն համեմատությունների համար հիմք հանդիսացած տեղեկությունների աղբյուրները;

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի**

• համեմատություններում պետք է ներառվեն այն հիմնական փաստերը կամ ենթադրությունները, որոնք հիմք են հանդիսացել համեմատության կատարման համար:

**3.1.8** Այն դեպքերում, երբ տեղեկատվությունը պարունակում է դրույթներ ներդրումային ծառայությունների, արժեթղթի կամ ֆինանսական ինդեքսի վերջին ժամանակներում դրսևորած վարքագծի կամ ցուցանիշների մասին, ապա.


- այդ դրույթները չպետք է մյուս դրույթների համեմատությամբ լինեն ավելի աչքի ընկնող;
- այդ տեղեկատվությունը պետք է ներառի ներդրումային ծառայությունների, արժեթղթի կամ ֆինանսական ինդեքսի դրսևորած վարքագիծը կամ ցուցանիշները վերջին 5 տարվա համար (առկայություն դեպքում);
- պետք է նշվեն տեղեկատվության աղբյուրները;
- այդ տեղեկատվությունը պետք է ներառի նախազգուշական դրույթ այն մասին, որ նախկինում ցուցաբերած վարքագիծը կամ նախկին ցուցանիշները չեն նշանակում, որ դրանք շարունակվելու են նաև ապագայում;
- այն դեպքում, երբ դրանք համախառն ցուցանիշներ են, այսինքն՝ ներառված չեն հարկերի, միջնորդավճարների կամ նման այլ վճարների գումարները, պետք է բացահայտվի այդ հանգամանքը:
- Տրամադրվող տեղեկատվությունը Հաճախորդին պետք է հնարավորություն տա հասկանալու իրեն առաջարկվող կոնկրետ ծառայության և արժեթղթերի էությունը և դրանց հետ կապված ռիսկերը: Այդ տեղեկատվությունը կարող է ներկայացվել Հաճախորդին ստանդարտ ձևով (մասնավորապես՝ գրքույկների ձևով):
- Սույն գլխի 3.1.1.-3.1.8. կետերով սահմանված տեղեկությունները հաճախորդին են ներկայացվում բանավոր կամ ստանդարտ գրավոր ձևով (գրքույկի տեսքով):

**3.1.9** Մինչև բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելը Ընկերությունը Հաճախորդին ծանոթացնում է նաև սույն կարգին, որը հրապարակված է Ընկերության պաշտոնական [www.unibank.am](http://www.unibank.am) կայքում, ինչպես նաև տրամադրում է սույն կարգով սահմանված բրոքերային ծառայությունների մատուցումը կարգավորող իրավական ակտը(երը) դրա(նց) հետ ծանոթանալու համար:

**3.1.10** Ընկերությունն պարտավոր է մինչև Պատվերի ընդունումը Հաճախորդից պահանջել տեղեկատվություն մատուցվող բրոքերային ծառայության կամ արժեթղթի վերաբերյալ հաճախորդի գիտելիքների և փորձի, մասնավորապես՝

- տեղեկություններ այն ներդրումային ծառայությունների, արժեթղթերով գործարքների և արժեթղթերի մասին, որոնց հետ որևէ կերպ առնչվել է հաճախորդը.
- հաճախորդի կողմից արժեթղթերով կատարված գործարքների բնույթը , ծավալը և հաճախականությունը, ինչպես նաև ժամանակահատվածը, որի ընթացքում կատարվել են այդ գործարքները
- հաճախորդի կրթական մակարդակը, մասնագիտությունները և զբաղմունքը:

**3.1.11** Սույն կարգի 3.1.10. կետով սահմանված տեղեկությունները ներկայացվում են Հավելված 1-ին համապատասխան:

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

### Ընդհանուր հասանելի

**3.1.12** Այն դեպքում, եթե Ընկերությունը Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա գտնում է, որ իր կողմից մատուցվող բրոքերային ծառայությունը կամ արժեթուղթը չի համապատասխանում հաճախորդի պահանջներին, ապա Ընկերությունը բանավոր կերպով զգուշացնում է Հաճախորդին այդ մասին:

**3.1.13** Այն դեպքում, երբ Հաճախորդը չի տրամադրում սույն կարգի 3.1.10 կետով նշված տեղեկատվությունը կամ տրամադրում է ոչ բավարար տեղեկատվություն, ապա Ընկերությունը պարտավոր է բանավոր կերպով զգուշացնել Հաճախորդին այն մասին, որ Հաճախորդի նման վարքագիծը թույլ չի տալիս գնահատել, թե արդյոք տվյալ ծառայությունը կամ արժեթուղթը համապատասխանում են Հաճախորդի պահանջներին:

**3.1.14** Նախքան պայմանագրի կնքումը և բրոքերային ծառայությունների մատուցումը Ընկերությունը, դասակարգում է հաճախորդին՝ որպես պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ՝ համապատասխան նշում կատարելով: Որպես պրոֆեսիոնալ հաճախորդ կարող են դասակարգվել բացառապես որակավորված ներդրողները՝ իրենց համաձայնությունը տալու դեպքում:


**3.1.15** Այն հաճախորդները, որոնք Օրենքում նշված ներդրումային ծառայություններից որևէ մեկի կամ բոլոր ծառայությունների մասով տվել են իրենց համաձայնությունը որպես պրոֆեսիոնալ որակվելու համար, գրավոր հայտարարություն են ներկայացնում Ընկերությանը՝ համաձայն Հավելված 2-ի, այն մասին, որ.

- համաձայն են որակվել որպես պրոֆեսիոնալ կամ ոչ պրոֆեսիոնալ հաճախորդ,
- տեղյակ են, որ որպես պրոֆեսիոնալ հաճախորդ որակվելու դեպքում հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական որոշակի պահանջներ չեն գործում իրենց նկատմամբ և այդ պատճառով իրենք կորցնում են որոշակի պաշտպանվածություն:

## 3.2 Բրոքերային ծառայությունների մատուցման Պայմանագիրը

**3.2.1** Պայմանագիրը սահմանում է՝

- 1). Ընկերության և Հաճախորդի իրավունքներն ու պարտականությունները,
- 2). ներդրումային ծառայությունների դիմաց վարձատրության չափի հաշվարկման և վճարման կարգը,
- 3). Հաճախորդին հաշվետվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը, ժամկետները և ձևը,
- 4). Հաճախորդի հետ կապի իրականացման կարգը, ինչպես նաև այն միջոցները, որոնք տվյալ Հաճախորդի համար հանդիսանում են տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներ,
- 5). Պայմանագրի պահանջների չափապանման համար կողմերի պատասխանատվությունը,
- 6). Կողմերի միջև առաջացող վեճերի լուծման կարգը,
- 7). Պայմանագրի գործողության ժամկետը, փոփոխությունների և լրացումների կատարման, գործողության դադարեցման կարգը, այդ թվում՝ Հաճախորդի կողմից պայմանագիրը միակողմանիորեն լուծելու իրավունքը՝ Ընկերությանը առնվազն 10 օր առաջ տեղեկացնելու պայմանով,
- 8). Պայմանագրի դադարեցման դեպքում հաճախորդի միջոցների վերադարձման կարգը,
- 9). օրենքով նախատեսված պարտադիր այլ տեղեկություններ:

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի**

**3.2.2** Ի լրումն վերոնշյալ տեղեկությունների՝ Պայմանագիրը կարող է պարունակել նաև Օրենքին, նորմատիվ իրավական ակտերին և Ընկերության ներքին իրավական ակտերին ու կանոնակարգերին չհակասող այլ դրույթներ:

**3.2.3** Ընկերության հետ Պայմանագիր կնքած Հաճախորդին Ընկերությունը շնորհում է նաև նույնականացնող համար /չկրկնվող տարբերակիչ ծածկագիր/, որը հնարավորություն է ընձեռում նույնականացնել Հաճախորդին:

**3.2.4** Նույնականացնող համարը /չկրկնվող տարբերակիչ ծածկագիրը/ բաղկացած է երեք սիմվոլներից և հինգ նիշերից..

BR	F/C	X1X2	X3X4X5
Ծառայության տեսակը	Հաճախորդի տեսակը	Պայմանագրի տարեթիվ	Պայմանագրի հերթական համարը
Հաճախորդի բորսայական ծածկագ			

BR- առաջին երկու սիմվոլները արտահայտում են այն, որ Ընկերության հետ Պայմանագիր կնքած Հաճախորդին մատուցվում է բրոքերային ծառայություն,

q F/C -երրորդ սիմվոլը (F կամ C) արտահայտում է Ընկերության հետ Պայմանագիր կնքած Հաճախորդի տեսակը՝ F -ֆիզիկական անձ կամ C-իրավաբանական անձ,

q X1X2 - սույն նիշերը արտահայտում են Պայմանագրի կնքման տարեթվի վերջին երկու նիշը (օրինակ՝2012թ.կնքված Պայմանագրի համար սույն նիշերը կլինեն՝12),

q X3X4X5 -սույն նիշերը արտահայտում են Հաճախորդի հետ կնքված Պայմանագրի հերթական համարը: Պայմանագրի համարակալումը վերսկսվում է յուրաքանչյուր ֆինանսական տարվա սկզբից, ընդ որում այն շարունակվում է անկախ վերը նշված երրորդ սիմվոլի փոփոխությունից, այսինքն՝ հաճախորդի տիպից:


**3.2.5** Սույն կարգի 3.2.5. կետով սահմանված նույնականացնող համարի հինգ նիշերը միասին (X1X2X3X4X5) կարգավորվող շուկայում բրոքերային գործարքների իրականացման դեպքում նաև հանդիսանում են տվյալ Հաճախորդի համար կարգավորվող շուկայի ծածկագիրը / \*հաճախորդի բորսայական ծածկագիր /:

**3.3 Արժեթղթերով պատվերի ձևը, գրանցումը, դրանում ներառվող տեղեկությունները, պատվերի ներկայացման, հետևանքման և դրանում փոփոխությունների կատարման կարգը**

**3.3.1** Հաճախորդի կողմից Ընկերությանը տրվող պատվերը պետք է գրանցվի այն ստանալու օրը և պետք է ներառի հետևյալ տեղեկությունները՝

- 1) հաճախորդի անուն ազգանունը (անվանումը) կամ հաճախորդին նույնականացնող համարը (սահմանվում է հերթականության սկզբունքով)
- 2) պատվերի տրման ժամանակը (րոպե/ժամ/օր/ամիս/տարի).
- 3) հաճախորդի հետ կնքված պայմանագրի համարը և ամսաթիվը.
- 4) թողարկողի անվանումը.



	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի**

- 5) արժեթղթերի դասը.
- 6) գործարքի տիպը (կարգավորվող շուկա/ կարգավորվող շուկայից դուրս).
- 7) գործարքի տեսակը (առք, վաճառք).
- 8) պատվերի տեսակը.
- 9) արժեթղթերի քանակը, միավոր գինը, ընդհանուր ծավալը.
- 10) պատվերն ընդունող գործառնական բաժնի համապատասխան աշխատակցի անուն ազգանունը ստորագրությունը.
- 11) գործարքի կնքման վայրը.
- 12) հաճախորդի կողմից տրված առանձնահատուկ ցուցումներ.
- 13) պայմանագրով նախատեսված այլ տեղեկություններ՝ սահմանված Ընկերության և հաճախորդի փոխադարձ համաձայնությամբ:

**3.3.2** Սույն կարգի 3.3.1. կետով սահմանված տեղեկությունները ներկայացվում են Հավելված 3-ի համապատասխան.

**3.3.3** Հաճախորդի կողմից Ընկերությանը տրվող պատվերը պետք է ներառի հանձնարարականի հետևյալ տեսակները՝ ըստ գնային պայմանների՝

- 1) Շուկայական հանձնարարական
- 2) Գնման/վաճառքի լիմիտային հանձնարարական
- 3) Գնման/վաճառքի ստոպ հանձնարարական
- 4) Գնման/վաճառքի ստոպ լիմիտային հանձնարարական:

**3.3.4** հանձնարարականի հետևյալ տեսակները՝ ըստ ծավալային պայմանների՝

- 1) Բավարարել լրիվ
- 2) Բավարարել մասնակի
- 3) Հանել մնացորդը:


**3.3.5** հանձնարարականի հետևյալ տեսակները՝ ըստ ժամանակային պայմանների՝

- 1) Անմիջապես բավարարել կամ հանել
- 2) Պահել հերթում մինչև բավարարումը:

**3.3.6** Հաճախորդի արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով գործարքների կնքման համար հիմք է հանդիսանում միայն հաճախորդի կողմից Հավելված 3-ին համապատասխան լրացված և Ընկերությանը ներկայացված պատվերը: Վերջինս ներկայացված է համարվում, եթե այն ուղարկվել է փոստով, ֆաքսով կամ ներկայացվել է առձեռն:

**3.3.7** Հաճախորդի կողմից պատվերը տրվում է երկու օրինակից, ընդ որում մեկ օրինակը մնում է Ընկերությանը, իսկ մյուս օրինակը <<Պատվերն ընդունված է>> նշագրմամբ և բրոքերի ստորագրությամբ վերադարձվում է հաճախորդին:

**3.3.8** Այն դեպքում, երբ հաճախորդի կողմից ներկայացված պատվերով գործարքի կատարումը հակասում է վերջինիս ներդրումային նպատակներին Ընկերությունը պարտավոր է անմիջապես մինչև պատվերի կատարումը տեղեկացնել այդ մասին հաճախորդին, իսկ վերջինս էլ պարտավոր է ետ կանչել

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի**

իր պատվերը, դրանում կատարել համապատասխան փոփոխություններ կամ փոփոխել Կարգի 3.1.10 կետի համաձայն ներկայացված տեղեկությունները:

**3.3.9** Հաճախորդը կարող է ետ կանչել ներկայացրած պատվերը՝ համաձայն Հավելված 4-ի կամ պատվերում ծավալային կամ ժամանակային պայմանների փոփոխություններ կատարել՝ համաձայն Հավելված 5-ի, եթե տվյալ պատվերով դեռևս գործարք չի կնքվել Ընկերության կողմից:

**3.3.10** Պատվերում ներառվող տեղեկությունների փոփոխության դեպքում հաճախորդը պարտավոր է մինչև Ընկերության կողմից տվյալ պատվերով գործարքի կնքումը նոր, փոփոխված տեղեկություններ պարունակող պատվերը, Հավելված 5-ին համապատասխան, ներկայացնել բրոքերային գործառնությունների բաժին: Վերջինս ներկայացված է համարվում, եթե այն ուղարկվել է փոստով, ֆաքսով կամ ներկայացվել է առձեռն:

**3.3.11** Արտակարգ իրավիճակներում, երբ անհրաժեշտություն է առաջացել հաճախորդի միջոցների հավանական կորուստը կանխելու կամ նվազեցնելու համար ձեռնարկել համապատասխան միջոցառումներ, հաճախորդի կողմից փոփոխված տեղեկություններ պարունակող պատվերը կարող է տրվել նաև Ընկերության և հաճախորդի միջև համաձայնեցված տեղեկատվության փոխանցման հուսալի միջոցով: Տվյալ դեպքում հաճախորդի կողմից տրված բոլոր այն պատվերները, որոնք չեն ներկայացվել սույն կարգի 3.3 կետի պահանջներին համապատասխան, պետք է մինչև պատվերի տրման հաջորդ աշխատանքային օրը սահմանված կարգով ներկայացվեն Ընկերությանը:

**3.3.12** Հաճախորդի կողմից փոփոխված տեղեկություններ պարունակող պատվերը տրվում է երկու օրինակից, ընդ որում մեկ օրինակը մնում է Ընկերությունում, իսկ մյուս օրինակը <<Պատվերն ընդունված>> նշագրմամբ և բրոքերի ստորագրությամբ վերադարձվում է հաճախորդին:


**3.3.13** Ընկերության համապատասխան որակավորում ունեցող յուրաքանչյուր բրոքերի կողմից առանց համապատասխան ղեկավարի (կամ գործադիր տնօրենի) վավերացման, պատվերի հիման վրա կնքվող գործարքի թույլատրելի առավելագույն սահմանաչափը կազմում է 50 (Հիսուն) միլիոն ՀՀ դրամ:

**3.3.14** Սույն կարգի 3.3.13 կետով նախատեսված սահմանաչափը գերազանցելու դեպքում՝ Ընկերության Վարչության նախագահը պարտավոր է ստորագրել Ընկերությունում մնացող պատվերի օրինակը՝ վերջինիս վրա կատարելով <<Պատվերը վավերացված է>> նշագրումը:

**3.3.15** Ընկերությունը վարում է գրանցումներ հաճախորդի կողմից տրված յուրաքանչյուր պատվերի մասով պատվերների գրանցամատյանում: Այդ գրանցումները պետք է կատարվեն պատվերների ստացման պահից անհապաղ, սակայն ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը:

**3.3.16** Հաճախորդի կողմից տրված յուրաքանչյուր պատվերի մասին գրանցումները առնվազն ներառում են հետևյալ տեղեկությունները

- 1) հաճախորդի անուն ազգանունը (անվանումը) կամ հաճախորդին նույնականացնող համարը (սահմանվում է հերթականության սկզբունքով)
- 2) հաճախորդի հետ կնքված պայմանագրի համարը և ամսաթիվը.
- 3) թողարկողի անվանումը.
- 4) արժեթղթերի դասը.
- 5) գործարքի տիպը (կարգավորվող շուկա/ կարգավորվող շուկայից դուրս).

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի**

- 6) գործարքի տեսակը (առք, վաճառք).
- 7) պատվերի տեսակը.(շուկայական,լիմիտային և այլն)
- 8) արժեթղթերի քանակը, միավոր գինը, ընդհանուր ծավալը.
- 9) պատվերն ընդունող աշխատակցի անուն ազգանունը ստորագրությունը.
- 10) հաճախորդի կողմից տրված առանձնահատուկ ցուցումներ
- 11) պատվերի ստացման ժամանակը (րոպե/ժամ/օր/ամիս/տարի).

**3.4 Արժեթղթերով բրոքերային գործարքների կնքման, կատարման և գրանցման կարգը**

**3.4.1 Հաճախորդը մինչև պատվերի ներկայացումը պարտավոր է Ընկերությանը տրամադրել նաև՝**

- 1) իրավաբանական անձի անունից պատվեր ներկայացնելու իրավասություն ունեցող անձի լիազորությունը հաստատող փաստաթուղթը (լիազորագրի անհրաժեշտության դեպքում) և պատվեր ներկայացնող անձի անձնագրի պատճենը: Ֆիզիկական անձանց համար՝ միայն անձնագրի պատճենը.
- 2) արժեթղթերի վաճառքի պատվեր ներկայացնելու դեպքում՝ վաճառքի առարկա հանդիսացող արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթուղթ:

**3.4.2 Բրոքերը պատվերի ընդունումից հետո պատվերի մեջ ներառված՝ գործարքի կնքման համար բոլոր անհրաժեշտ տվյալների հիման վրա կազմում է բրոքերային հայտերը: Ընկերության հաճախորդների կողմից ներկայացված պատվերները ենթակա են առաջնահերթ կատարման Ընկերության դիլերային հայտերի նկատմամբ:**

**3.4.3 Ընկերության կողմից գործարքները կնքվում են՝**


- 1) ֆոնդային բորսայում՝ բրոքերի կողմից բորսայական առևտրի ընթացքում հայտ ներկայացնելու միջոցով.
- 2) ֆոնդային բորսայից դուրս՝ բրոքերի կողմից ֆոնդային բորսայից դուրս արժեթղթերի գնման/վաճառքի առաջարկ ներկայացնելու միջոցով:

**3.4.4 Ֆոնդային բորսայում բրոքերի կողմից գործարքները կնքվում և կատարվում են ֆոնդային բորսայի կողմից սահմանված կանոններին համապատասխան:**

**3.4.5 Արտաբորսայական գործարքներն Ընկերության կողմից կատարվում են արժեթղթերի շուկան կարգավորող ՀՀ օրենսդրության համաձայն: Արտաբորսայական գործարքների իրականացման առանձնահատկությունները սահմանվում են Ընկերության և հաճախորդի միջև կնքված արտաբորսայական գործարքի կնքման պայմանագրով:**

**3.4.6 Եթե հաճախորդը պատվերը ներկայացնում է մինչև տվյալ օրվա ժամը 11:00, ապա գործարքը կատարվում է մինչև տվյալ գործառնական օրվա ավարտը, իսկ 11:00-ից հետո տրված պատվերները՝ հաջորդ գործառնական օրը:**

**3.4.7 Պատվերը ձևակերպելուց առաջ և հաճախորդին պատշաճ ձևով /բանավոր եղանակով, ինչպես նաև սույն կարգին ծանոթացնելու միջոցով/ ներկայացվում է պատվերի առարկա հանդիսացող արժեթղթերի և նրանցում ներդրումներ կատարելու հետ կապված ռիսկերը, որից հետո Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը կրել իր պատվերի առարկա հանդիսացող արժեթղթերի և նրանցում ներդրումներ կատարելու հետ կապված ռիսկերը համաձայն Հավելված 3-ի:**

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի**

**3.4.8** Ընկերությունը վարում է գրանցումներ հաճախորդի հետ կնքված յուրաքանչյուր բրոքերային գործարքի մասով գործարքների գրանցամատյանում: Այդ գրանցումները պետք է կատարվեն գործարքի կնքման պահից անհապաղ, սակայն ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը:

**3.4.9** Բրոքերային գործարքների մասով գրանցումները պետք է վարվեն այնպիսի եղանակով կամ միջոցներով, որպեսզի բավարարվեն հետևյալ պայմանները.

1) Կենտրոնական բանկի պահանջով այդ գրանցումները պետք է հասանելի և մատչելի լինեն Կենտրոնական բանկին և պետք է հնարավոր լինի վերծանել կատարված յուրաքանչյուր գործարքի յուրաքանչյուր փուլ,

2) եթե այդ գրանցումներում փոփոխություններ կամ լրացումներ են կատարվում, ապա դրանք պետք է կատարվեն այնպես, որպեսզի հնարավոր լինի պարզել այդ գրանցումների սկզբնական բովանդակությունը և յուրաքանչյուր փոփոխությունը կամ լրացումը,


3) պետք է բացառվի երրորդ անձանց կողմից այդ գրանցումների չթույլատրված օգտագործումը:

**3.4.10** Կարգավորվող շուկայում առևտրին մասնակցության նպատակով Կորպորատիվ արժեթղթերի և Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա ԲԲ ընկերության կողմից հաշվառվող այլ արժեթղթերի, ինչպես նաև դրամական միջոցների, դեպոնացումն ու ապահովագրումը կատարվում է «ԱՐԺԵԹ-ՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ»-ով սահմանված կարգով:

**3.5 Գործարքի վավերագրի ձևը, դրանում ներառվող տեղեկությունները և հաշվապահության բաժին դրա ներկայացման կարգը.**

**3.5.1** Գործարք կնքելուց անմիջապես հետո բրոքերի կողմից լրացվում է գործարքի վավերագիրը՝ երկու օրինակից, որը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները՝

- 1) վավերագրի հերթական (անհատական) համարը.
- 2) վավերագրի լրացման ժամանակը (րոպե/ժամ/օր/ամիս/տարի).
- 3) համապատասխան պատվերի համարը.
- 4) թողարկողի անվանումը.
- 5) արժեթղթի դասը.
- 6) գործարքի կնքման ժամանակը (րոպե/ժամ/օր/ամիս/տարի).
- 7) գործարքի տիպը (կարգավորվող շուկա/ կարգավորվող շուկայից դուրս).
- 8) գործարքի տեսակը (առք, վաճառք).
- 9) գործարքի բնույթը, եթե գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ (արժեթղթերի բաժանորդագրություն, օպցիոնի իրականացում և այլն).
- 10) գործարքի առարկա հանդիսացած արժեթղթերի քանակը, մեկ արժեթղթի գինը և գործարքի ընդհանուր գումարը.
- 11) կարգավորվող շուկայից դուրս գործարքի դեպքում՝ գործարքի հանդիպակաց կողմ հանդիսացող բրոքերային ընկերության անվանումը կամ այլ անձի հետ կնքված գործարքի համար հիմք հանդիսացած փաստաթղթի համարը և ամսաթիվը.
- 12) գործարքի կատարման (վերջնահաշվարկի) պայմանները.

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

### Ընդհանուր հասանելի

13) գործարքը կնքող բրոքերի անունը, ազգանունը և ստորագրությունը:

**3.5.2** Սույն կարգի 3.5.1 կետով սահմանված տեղեկությունները ներկայացվում են Հավելված 6-ի համապատասխան:

**3.5.3** Բրոքերի կողմից լրացված գործարքի վավերագրի 2-րդ օրինակը մինչև գործարքի կնքման օրվա ավարտը ներկայացվում է հաշվապահության բաժին:

**3.5.4** Եթե Ընկերությունը հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման պատվերներ է ընդունում և հաղորդում, ապա պատվերի հաղորդումից հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը պետք է կատարվի գրանցումներ ընդունված և հաղորդված պատվերների մասին: Այդ գրանցումները ներառում են հետևյալ տեղեկությունները.


- 1) հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը) և/կամ հաճախորդին նույնականացնող համարը,
- 2) այն անձի անվանումը կամ նույնականացնող համարը, ում հաղորդվել է պատվերը
- 3) հաղորդված պատվերի պայմանները
- 4) պատվերի հաղորդման ամսաթիվը և ճշգրիտ ժամը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը, օրը, ժամը և րոպեն:

### **3.6 Հաճախորդին պատվերի կատարման արդյունքների և հաճախորդի արժեթղթերի ու դրամական միջոցների մասին հաշվետվությունների ներկայացման կարգը և ձևը**

**3.6.1** Պատվերի հիման վրա արժեթղթերի գնման կամ վաճառքի յուրաքանչյուր գործարքը կնքելուց հետո անհապաղ, սակայն ոչ ուշ քան գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը Ընկերությունը պարտավոր է հաճախորդին առձեռն ներկայացնել կամ տեղեկատվության փոխանցման հուսալի միջոցով տրամադրել գործարքի կնքման վերաբերյալ հաշվետվություն (ընթացիկ հաշվետվություն):

**3.6.2** Ընթացիկ հաշվետվությունը պետք է ներառի՝

- 1) Ընկերության անվանումը,
- 2) հաճախորդի անունը, ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը) կամ հաճախորդին նույնականացնող համարը,
- 3) գործարքի կնքման ամսաթիվը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը, օրը,
- 4) գործարքի կնքման ժամը՝ հաջորդաբար նշելով ժամը և րոպեն ,
- 5) հաճախորդի կողմից տրված պատվերի տեսակը (շուկայական, լիմիտային և այլն),
- 6) գործարքի կնքման վայրը (նշվում է ֆոնդային բորսայի անվանումը, այլ կարգավորվող շուկայի անվանումը կամ <<չկարգավորվող շուկա>>),
- 7) արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը, թողարկման համարը (բացակայության դեպքում՝ թողարկողի անվանումը և արժեթղթի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը),
- 8) պատվերում նշված գործարքի տեսակը (առք, վաճառք),
- 9) պատվերի բնույթը, եթե պատվերում նշված գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ (արժեթղթերի բաժանորդագրություն, օպցիոնի իրականացում և այլն),
- 10) արժեթղթերի քանակը (ծավալային արժեթղթերի դեպքում՝ անվանական արժեքը),
- 11) միավորի գինը (ծավալային արժեթղթերի դեպքում չի լրացվում),,

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի**

- 12) ընդհանուր ծավալը,
- 13) գանձված միջնորդավճարների կամ այլ վճարների համախառն գումարը, իսկ ոչ պրոֆեսիոնալ հաճախորդի պահանջի դեպքում՝ նաև դրանց բացվածքը,
- 14) հաճախորդի կողմից վճարումները կատարելու պայմանները և ժամկետը, եթե դրանց մասին հաճախորդը նախօրոք չի տեղեկացվել (բանկային հաշվեհամարը և այլն),
- 15) այն փաստի մասին, որ հաճախորդի տեսանկյունից գործարքի մյուս կողմը հանդես է եկել այդ ներդրումային ծառայություններ մատուցող անձը, այդ ներդրումային ծառայություններ մատուցող անձի խմբի մեջ գտնվող որևէ անձ կամ այդ ներդրումային ծառայություններ մատուցող անձի մեկ այլ հաճախորդ, եթե գործարքը չի իրականացվել այնպիսի կարգավորվող շուկայում, որն ապահովում է գործարքի մի կողմի անհայտ լինելը մյուսի համար:

**3.6.3** Սույն կարգի 3.6.2. կետով սահմանված տեղեկությունները ներկայացվում են Հավելված 7-ի համապատասխան:

**3.6.4** Եթե հաճախորդի պատվերը կատարվում է մասնաբաժիններով, ապա Ընկերությունը հաճախորդին ընթացիկ հաշվետվություն է ներկայացնում ըստ յուրաքանչյուր մասնաբաժնի:

**3.6.5** Սույն կետի իմաստով հաճախորդին ներկայացվող հաշվետվությունները պետք է ներառեն հետևյալ տեղեկությունները՝


- 1) հաշվետվության ներկայացման ամսաթիվը.
- 2) Ընկերության անվանումը և կազմակերպական-իրավական տեսակը.
- 3) Ընկերության գործադիր տնօրենի անունը, ազգանունը, ստորագրությունը
- 4) պետք է վավերացված լինեն Ընկերության կնիքով:

**3.6.6** Ընկերությունը պարտավոր է յուրաքանչյուր ամսվա համար մինչև տվյալ ամսին հաջորդող ամսվա 15-ը իր հաճախորդին առձեռն տրամադրել (փոստով ուղարկել) վերջինիս պատվերների հիման վրա կատարված գործարքների և արժեթղթերով ու դրամական միջոցներով հաշիվների շարժի վերաբերյալ հաշվետվություններ (պարբերական հաշվետվություններ):

**3.6.7** Հաճախորդի պատվերների հիման վրա կատարված գործարքների վերաբերյալ պարբերական հաշվետվությունը՝ ըստ կնքված յուրաքանչյուր գործարքի, պետք է ներառի՝

- 1) գործարքի տեսակը (առք, վաճառք).
- 2) թողարկողի անվանումը.
- 3) արժեթղթերի դասը.
- 4) գործարքի առարկա հանդիսացած արժեթղթերի քանակը, մեկ արժեթղթի գինը և գործարքի ընդհանուր գումարը.
- 5) գործարքի կնքման ամսաթիվը (օր/ամիս/տարի).
- 6) գանձվող միջնորդավճարի մեծությունը.
- 7) գործարքի կատարման (վերջնահաշվարկի) պայմանները.
- 8) Ընկերության կողմից սահմանված այլ տեղեկություններ:

**3.6.8** Սույն կարգի 3.6.7. կետով սահմանված տեղեկությունները ներկայացվում են Հավելված 8-ի համապատասխան:

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

### Ընդհանուր հասանելի

**3.6.9** Հաճախորդի արժեթղթերով և դրամական միջոցներով հաշիվների շարժի վերաբերյալ պարբերական հաշվետվությունը՝ ըստ կնքված յուրաքանչյուր գործարքի, պետք է ներառի՝

- 1) հաճախորդի հաշվի տեսակը (արժեթղթերի, դրամական միջոցների) և համարը.
- 2) ամսաթիվը (օր/ամիս/տարի).
- 3) գործարքի, որի հիման վրա կատարվել է արժեթղթերի և/կամ դրամական միջոցների շարժը, հերթական համարը գործարքների վերաբերյալ պարբերական հաշվետվությունում.
- 4) հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում մուտքերը.
- 5) հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ելքերը.
- 6) հաշվետու ժամանակաշրջանի վերջում հաշվի մնացորդը.
- 7) Ընկերության կողմից սահմանված այլ տեղեկություններ:

**3.6.10** Սույն կարգի 3.6.9. կետով սահմանված տեղեկությունները ներկայացվում են Հավելված 9-ի համապատասխան:

**3.6.11** Սույն կետի համաձայն հաճախորդին ներկայացվող հաշվետվությունները պետք է ներառեն հետևյալ տեղեկությունները՝

- 1) հաշվետվության ներկայացման ամսաթիվը.
- 2) Ընկերության անվանումը և կազմակերպական-իրավական տեսակը.
- 3) Ընկերության գործադիր տնօրենի անունը, ազգանունը, ստորագրությունը
- 4) պետք է վավերացված լինեն Ընկերության կնիքով:


**3.6.12** Սույն կարգի 3.6.1. և 3.6.6. կետերով սահմանված հաշվետվություններից յուրաքանչյուրը Հաճախորդին են տրամադրվում երկու օրինակից: Վերջինս ստորագրելով յուրաքանչյուր հաշվետվության մեկ օրինակի վրա հաստատում է, որ ստացել է այն:

### **3.7 Բրոքերային գործունեություն իրականացնելու արդյունքում առաջացող ռիսկերը և դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումները**

**3.7.1** Ընկերությունը պարտավոր է տեղեկացնել Հաճախորդին այն մասին, որ արժեթղթերում ցանկացած ներդրում իր բնույթով հանդիսանում է ռիսկային: Արժեթղթերի շուկայում գործարքներ կատարելիս ներդրողը առնչվում է հետևյալ ռիսկերի հետ.

#### **3.7.1.1. Ըստ ռիսկերի գործոնների՝**

- **Ֆինանսական գործիքների գների փոփոխության ռիսկ.** արժեթղթերի շուկայական գները և դրանց փոփոխությունները չեն գտնվում Ընկերության հսկողության տակ: Նշված պատճառով արժեթղթերում ներդրման դեպքում հնարավոր է նաև հաճախորդի պորտֆելի արժեքի նվազում, ընդհուպ մինչև ամբողջ պորտֆելի կորուստը:
- **Իրացվելիության նվազման ռիսկ.** այս ռիսկը կապված է տվյալ գործիքի նկատմամբ շուկայի այլ մասնակիցների հետաքրքրության նվազման հետ: Ֆինանսական գործիքի իրացվելիությունը կախված է թողարկողների կորպորատիվ գործողություններից, նրանց ֆինանսատնտեսական գործունեությունից, ընդհանուր շուկայի վիճակից, բորսաների ներքին կանոններից, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ տվյալ ֆինանսական գործիքի գնի, հետևաբար նաև հաճախորդի պորտֆելի արժեքի վրա:

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	


**Ընդհանուր հասանելի**

- **Օրենսդրության փոփոխության ռիսկ.** այս ռիսկը կապված է պետական իշխանության մարմինների և շուկաները կարգավորող այլ մարմինների գործողությունների հետ, որի հետևանքով հաճախորդը կարող է կրել զգալի կորուստներ:
- **Ենթակառուցվածքային ռիսկ.** այս ռիսկը կապված է դեպոզիտարիաների, բորսաների, հաշվարկաքիրինգային կազմակերպությունների աշխատանքների հետ, որոնց գործունեությունում ընդհատումները կարող են հանգեցնել հաճախորդի ակտիվների անվերադառնալի կորուստների:
- **Էլեկտրոնային առևտրային համակարգերի օգտագործման հետ կապված ռիսկեր.** այս ռիսկերը կապված են համակարգային սարքավորումների, ծրագրային ապահովման անսարքության առաջացման, էլեկտրասնուցման, կապի ընդհատումների և այլնի հետ, որոնք կարող են նպաստել հաճախորդի ակտիվների կորուստների:
- **Այլ ռիսկեր.** վերը թվարկված ռիսկերի ցանկը սպառիչ չէ, քանի որ ներդրումային գործունեությունը կարող է ուղեկցվել նաև այլ ռիսկերով:

**3.7.1.2. Ըստ արժեթղթերի տեսակների**

- **բաժնետոմս.** ընկերությունների բաժնետոմսերի հետ սովորական առուվաճառքի գործառնությունները համարվում են սահմանափակ ռիսկով գործառնություններ, ինչը նշանակում է, որ հաճախորդի կորուստներ կրելու ռիսկը սահմանափակվում է նրա կողմից բաժնետոմսերով գործառնություններ կատարելու համար ծախսված գումարներով: Միևնույն ժամանակ որոշակի հանգամանքներում կորուստներ կարող են առաջանալ համեմատաբար կարճ ժամանակամիջոցում: Այսպես՝ բաժնետոմսերի շուկայում առկա են ֆինանսական ռիսկեր, որոնք իրենցից ներկայացնում են ֆինանսական գործառնությունների ընթացքում առաջացող իրական վնասի ռիսկեր, որոնք պայմանավորված են շուկայական անբարենպաստ գործոններով: Ֆինանսական ռիսկեր են արժույթային ռիսկը, թողարկողի սնանկության ռիսկը, գնային ռիսկը, իրացվելիության ռիսկը:
- **Ֆյուչերս** - ֆյուչերսներում ներդրումներ կատարելու դեպքում առկա է կարճ ժամանակահատվածում մեծ գումարներ կորցնելու ռիսկ, ընդ որում հնարավոր կորուստների չափը անսահմանափակ է, որոնք կարող են անգամ գերազանցել բրոքերի մոտ բացված հաշվին սկզբնապես մուտքագրված գումարը: Պատճառն այն է, որ ֆյուչերսների առքուվաճառքը ենթադրում է մեծ արժեք ունեցող ակտիվների գծով դիրք բացելու հնարավորություն համեմատաբար փոքր գումարներով, ինչը ստեղծում է թե նվազ միջոցներով առավել մեծ գումարներ շահելու հնարավորություն թե ներդրմանը անհամեմատ մեծ գումարներ կորցնելու ռիսկ: Եթե հաճախորդը վստահ չէ՝ հնարավոր կլինի արդյոք կառավարել այս բոլոր ռիսկերը, գերադասելի է, որ ձեռնպահ մնա արժեթղթերի ֆյուչերսների առքուվաճառքից:
- **Օպցիոն** - Օպցիոնները նույնպես դասվում են ռիսկային ֆինանսական գործիքների շարքին, որոնցում ներդրումները և որոնցով գործառնությունները ոչ բոլորին են նպատակահարմար: Օպցիոնների առքուվաճառքին հատուկ ռիսկերը նույնպես ենթադրում են կարճ ժամանակամիջոցում մեծ կորուստներ կրելու հնարավորություն: Օպցիոն պայմանագիր ձեռքբերած անձը շատ կարճ ժամանակահատվածում կարող է կորցնել գնված առքի/վաճառքի օպցիոնի դիմաց վճարված ողջ գումարը կամ անսահմանափակ չափով կորուստներ կրել օպցիոնի կարճ վաճառքի հետևանքով: Այս



	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

### Ընդհանուր հասանելի

նիսկը պայմանավորված է օպցիոնի բնույթով, այն է՝ օպցիոնը հանդիսանում է արժեզրկվող ակտիվ, որը ունի գործողության սահմանափակ ժամկետ և այդ ժամկետը լրանալուց հետո կարող է ամբողջությամբ կորցնել իր արժեքը:

- **պարտատոմս** - թեև պարտատոմսերը դասվում են զգալիորեն ցածր ռիսկայնություն ունեցող գործիքներին, սակայն ինչպես բոլոր ֆինանսական շուկայի գործիքները այն նույնպես պարունակում է իրեն բնորոշ շուկայական, իրացվելիության, թողարկողի անվճարունակության և այլ ռիսկեր:

**3.7.2** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռիսկը շուկայի օբյեկտիվ իրականությունն է, նրանից չի կարելի խուսափել. ուստի Ընկերությունը կարևորում է ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ ունենալու հանգամանքը, որի նպատակն է կանխատեսել և հնարավորինս կանխել և/կամ նվազեցնել Ընկերության և հաճախորդների ռիսկերը՝ դրանց հետևանքները վերացնելու փոխարեն: Այս առումով Ընկերությունն իրականացնում է ռիսկերի կանխարգելմանն ուղղվող հետևյալ հիմնական միջոցառումները.

1) թողարկողների մանրամասն վերլուծություն (առաջին հերթին Ընկերությունն ուշադրություն է դարձնում հետևյալ գործոնների առկայությանը՝ եռանդուն և վճռական կառավարիչների արհեստավարժ թիմ, ռազմավարության հստակ պատկերացում և մանրամասն գործարարության ծրագիր (բիզնես-պլան), շուկայում առաջատար դիրքեր գրավելու ներուժ, սպառողական պահանջարկի բավարարման լայն հնարավորություններ, ֆինանսական ցուցանիշներ, թափանցիկություն և կորպորատիվ կառավարման սկզբունքների պահպանում և այլն):

2) ներդրումային պորտֆելի դիվերսիֆիկացիա.

3) առկա և պոտենցիալ հաճախորդներին (անկախ ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի ժամկետի ավարտից) իրազեկում բարձր հուսալիությամբ և եկամտաբերությամբ բնութագրվող ներդրումային նախագծերի վերաբերյալ:

**3.7.3** Բրոքերային գործունեություն իրականացնելու արդյունքում առաջացող հնարավոր ռիսկերի վերլուծությունը (բացահայտումը, գնահատումը և վերահսկումը) Ընկերության ռազմավարական պլանավորման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի գնահատման անբաժանելի մասն է հանդիսանում:


## ԳԼՈՒԽ 4. ԱՐՏԱՐԺՈՒՅԹՈՎ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 4.1 Հաճախորդի կողմից արտարժույթով պատվերների ներկայացման կարգը

**4.1.1** Հաճախորդի համար և նրա հաշվին արտարժույթով գործարքների կնքման համար հիմք է հանդիսանում միայն մինչև տվյալ գործարքի կնքումը հաճախորդի կողմից Ընկերության բրոքերային գործառնությունների բաժին ներկայացված Պատվերը:

**4.1.2** Հաճախորդի կողմից Պատվերները ներկայացվում են սույն կարգի անբաժանելի մասը կազմող Հավելված 10-ի համապատասխան:

**4.1.3** Հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացվող Պատվերը պետք է պարտադիր նշում պարունակի այն մասին թե տվյալ պատվերը բորսայական գործարքի կատարման Պատվեր է, թե արտաբորսայական գործարքի կատարման պատվեր:

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի**

**4.1.4** Հաճախորդը կարող է Ընկերությանը ներկայացնել արտարժույթով բրոքերային գործարքի կատարման Պատվերի հետևյալ տեսակները՝ ըստ գնային պայմանների.

- Շուկայական Պատվեր,
- Լիմիտային Պատվեր (Սահմանափակ),
- Ստոպ Պատվեր,
- Ստոպ լիմիտային Պատվեր,

**4.1.5** Հաճախորդը Պատվերները ներկայացնում է, դրանցում փոփոխություններ է կատարում կամ պատվերները հետ է կանչում Ընկերության ներդրումային և ոչ հիմնական ծառայությունների մատուցման հետ կապված փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության փոխանակման կանոնակարգով սահմանված կարգով:

**4.2 Արտարժույթով բրոքերային գործարքների կնքման և կատարման կարգը**

**4.2.1** Արտարժույթով բրոքերային գործարքներ կատարելիս Ընկերությունը պետք է՝

- 1) համոզվի, որ գործարք կատարելու համար Պատվերները պատշաճ կերպով գրանցվել և ներկայացվել են կատարման
- 2) այլ հավասար պայմաններ ունեցող Պատվերները կատարի ըստ դրանց ստացման հաջորդականության, բացառությամբ, եթե Պատվերի բնութագրիչները կամ շուկայում ստեղծված իրավիճակը դա անհնարին են դարձնում, և
- 3) հաճախորդին անհապաղ տեղյակ պահի այն էական դժվարությունների կամ բացասական հանգամանքների մասին, որոնք անհնարին են դարձնում հաճախորդի Պատվերի ճշգրիտ կատարումը:


**4.2.2** Հաճախորդի ներկայացրած պատվերները պետք է կատարվեն մինչև տվյալ պատվերի ներկայացման օրվան հաջորդող օրվա ավարտը: Եթե այդ ժամկետում հնարավոր չի լինում կատարել Պատվերը համապատասխան փոխարժեքի բացակայության պատճառով, ապա Պատվերը համարվում է դադարեցված:

**4.2.3** Հաճախորդի՝ արտարժույթի գնման պատվերի կատարման արդյունքում ստացված արտարժույթով արտահայտված գումարը Հաճախորդի հայեցողությամբ կարող է թողնվել Ընկերությունում Հաճախորդի ունեցած հաշվի վրա կամ վերադարձվել Հաճախորդին, ինչի մասին պետք է նշում պարունակվի Հաճախորդի պատվերում: կատարել Պատվերը համապատասխան փոխարժեքի բացակայության պատճառով, ապա Պատվերը համարվում է դադարեցված:

**4.2.4** Հաճախորդի՝ արտարժույթի գնման պատվերի կատարման արդյունքում ստացված արտարժույթով արտահայտված գումարը Հաճախորդի հայեցողությամբ կարող է թողնվել Ընկերությունում Հաճախորդի ունեցած հաշվի վրա կամ վերադարձվել Հաճախորդին, ինչի մասին պետք է նշում պարունակվի Հաճախորդի պատվերում:

**4.2.5** Եթե Հաճախորդը ցանկություն է հայտնել ետ ստանալ Պատվերի կատարման արդյունքում գնված արտարժույթով արտահայտված գումարը, ապա այն պետք է վերադարձվի Հաճախորդին մինչև Պատվերի կատարման օրվան հաջորդող օրվա ավարտը:

**4.2.6** Հաճախորդի Պատվերները կատարվում են Ընկերությունում Հաճախորդի ունեցած հաշվի վրա առկա միջոցների սահմաններում:

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի**

**4.2.7** Բրոքերային գործարք կատարելիս ընդհանուր առմամբ ավելի լավ արդյունք ապահովելու նպատակով Ընկերությունը կարող է համախմբել Հաճախորդի Պատվերը իր մեկ այլ Հաճախորդի Պատվերի հետ և այդ ձևով կատարել դրանք, եթե որևէ Հաճախարդի համար այն չի ապահովում ավելի վատ արդյունք, քան այն դեպքում, եթե նրա Պատվերը կատարվեր առանձին,

**4.2.8** Ընկերության Հաճախորդների կողմից ներկայացված Պատվերները ենթակա են առաջնահերթ կատարման Ընկերության դիլերային հայտերի նկատմամբ:

**4.2.9** Ընկերությունը կարող է իրականացնել ինչպես բորսայական, այնպես էլ արտաբորսայական բրոքերային գործարքներ՝ Սպասարկող բանկերի միջոցով: Հաճախորդի պատվերների կատարման վայրն ընտրելիս Ընկերությունը ղեկավարվում է Ընկերության պատվերների կատարման ընթացակարգով:

**4.2.10** Բորսայայական գործարքները կնքվում և կատարվում են Օրենքի, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի և կարգավորվող շուկայի օպերատորի կողմից սահմանված կանոնների համաձայն:

**4.2.11** Սպասարկող բանկի միջոցով գործարքները կատարվում են այդ բանկին փոխարկման հանձնարարական ներկայացնելու միջոցով, որի ձևը, ներկայացման ու կատարման գործընթացը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և տվյալ բանկի ներքին կանոնակարգերով:

**4.2.12** Եթե հնարավոր չի լինում Հաճախորդի պատվերը կատարել Բորսայայական գործարքի միջոցով, կամ այն կատարվում է մասնակիորեն, ապա այն կամ դրա չկատարված մասը պետք է կատարվի Սպասարկող բանկերի միջոցով:

**4.2.13** Արտարժույթով բրոքերային գործարքի կատարման դեպքում Հաճախորդից գանձվում է միջնորդավճար, որի մեծությունը որոշվում է Ընկերության գործող Սակագնային Սանդղակով:

**4.2.14** Ընկերությունը վերանայում է Պատվերների կատարման ընթացակարգն այն դեպքում, երբ կատարվել է այնպիսի զգալի փոփոխություն, որն այլևս հնարավորություն չի տալիս այդ ընթացակարգի համաձայն ընտրված՝ գործարքների կնքման վայրի միջոցով կատարել հաճախորդի Պատվերները Հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով:


**4.3. Արտարժույթով բրոքերային գործարքների գրանցումը**

**4.3.1** Ընկերությունը գրանցում է Հաճախորդի պատվերով կատարված արտարժույթի առքի կամ վաճառքի ցանկացած գործարք:

**4.3.2** Կատարված գործարքի մասին գրանցումները կատարվում են Հաճախորդի Պատվերը կատարելուց հետո՝ ոչ ուշ, քան մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտը:

**4.3.3** Սույն կարգի 4.3.2 կետի համաձայն կատարվող գրանցումները ներառում են հետևյալ տեղեկությունները.

1. Հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը) և/կամ Հաճախորդին նույնականացնող համարը,
2. գործարքի կնքման ամսաթիվը՝ հաջորդաբար նշելով օրը, ամիսը և տարին,
3. Գնվող և վաճառվող արժույթները (ISԳ կոդը)
4. փոխարժեքը,

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի**

5. Գործարքի գումարը:

**ԳԼՈՒԽ 5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**5.1 Պատվերների կատարման ընթացակարգը**

**5.1.1** Ընկերության Պատվերների կատարման ընթացակարգը հաստատվում է Ընկերության վարչության նախագահի կողմից:

**5.1.2** Ընկերության Պատվերների կատարման ընթացակարգը ներառում է տեղեկատվություն գործարքների կնքման տարբեր վայրերի (միջոցների) մասին, ինչպես նաև այն գործոնների մասին, որոնք հաշվի են առնվում այդ վայրերի միջև ընտրություն կատարելիս:

**5.1.3** Ընկերությունը պետք է հաճախորդներին տեղյակ պահի Պատվերների կատարման ընթացակարգի մասին և ստանա հաճախորդի նախնական համաձայնությունն այդ ընթացակարգն իր նկատմամբ կիրառելու վերաբերյալ:

**5.2. Հաճախորդի պատվերների կատարման քաղաքականությունը /չափանիշները/**

**5.2.1** Ընկերությունը պետք է ձեռնարկի բոլոր խելամիտ քայլերը, հաճախորդի պատվերը հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով կատարելու համար: Լավագույն պայմանների որոշումը կատարվում է հաշվի առնելով հետևյալ գործոնները՝ գինը, ծախսերը, ժամկետը, արագությունը, պատվերի կատարման և վարձնահաշվարկի իրականացման հավանականությունը, պատվերի ընդհանուր ծավալը, պատվերի բնույթը և այլ գործոններ:

**5.2.2** Սույն կարգի 5.2.1 . կետում նշված գործոնների կարևորության աստիճանը որոշվում է հաշվի առնելով հաճախորդի պրոֆեսիոնալ լինելը, պատվերի էական պայմանները, պատվերում նշված արժեթղթերի բնութագիրը, գործարքի կնքման վայրի առանձնահատկությունները:


**5.2.3** Ընդհանուր առմամբ, ավելի լավ արդյունք ապահովելու նպատակով, Ընկերությունը կարող է համախմբել, իր մի քանի հաճախորդների պատվերները, կամ իր հաշվին կատարվող գործարքն իր մեկ այլ հաճախորդի պատվերի հետ և այդ ձևով կատարել դրանք, եթե որևէ հաճախորդի համար այն չի ապահովում ավելի վատ արդյունք և բխում է հաճախորդների շահերից:

**5.2.4** Եթե Ընկերությունը հաճախորդի պատվերը համախմբում է իր հաշվին կատարվող գործարքի հետ, ապա այդ համախմբված պատվերի մասնակի բավարարման դեպքում, նախապատվությունը տրվում է հաճախորդին, իսկ իր մի քանի հաճախորդների համախմբված պատվերի մասնակի բավարարման դեպքում հաճախորդների պատվերները բավարարվում են համամասնորեն:

**5.3 Ընկերության և Հաճախորդների, ինչպես նաև Ընկերության տարբեր Հաճախորդների շահերի բախման սահմանափակման քաղաքականությունը**

**5.3.1** Այն դեպքում, երբ Ընկերությունը հիմնավոր փաստերի հիման վրա հանգում է այն եզրակացությանը, որ իր և հաճախորդի կամ տարբեր հաճախորդների միջև հաճախորդների Պատվերների կատարման ընթացքում կարող է առաջանալ շահերի բախում, ապա անհապաղ, բայց ոչ ուշ, քան հաճախորդի Պատվերի կատարման պահը, հաճախորդին տեղյակ է պահում այդ մասին՝ առաջարկելով շահերի բախումից խուսափելու եղանակներ:

**5.3.2** Եթե Հաճախորդը հրաժարվում է օգտագործել Ընկերության կողմից իրեն առաջարկված

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

### **Ընդհանուր հասանելի**

շահերի բախումից խուսափելու եղանակները, իսկ շահերի բախումը կարող է առաջանալ Ընկերության տարբեր հաճախորդների միջև, ապա Ընկերությունը հաճախորդների պատվերները կատարում է ըստ դրանց ստացման հաջորդականության, անկախ այն բանից, որ դրա արդյունքում հաճախորդներից որևէ մեկը կարող է տուժել: Այդ դեպքում համարվում է, որ Ընկերությունը ձեռնարկել է բոլոր խելամիտ քայլերը հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով Պատվերը կատարելու համար:

**5.3.3** Եթե շահերի բախումը առաջանում է Ընկերության և Հաճախորդի միջև, ապա Ընկերությունը Հաճախորդի Պատվերը կատարում է այնպես, որպեսզի դրա արդյունքում չտուժի հաճախորդը:

### **5.4 Հաճախորդների միջոցների պաշտպանությունը ապահովելու համար ձեռնարկվող քայլերը**

**5.4.1** Ընկերությունում հաճախորդների միջոցների պաշտպանությունը ապահովելու նպատակով ձեռնարկվում են հետևյալ միջոցառումները.

- 1) Առանձնացված հաշվառում. Ընկերությունը առանձին հաշիվներ ունի իր և իր հաճախորդների արժեթղթերի և դրամական միջոցների համար,
- 2) Ներքին վերահսկողություն. Ընկերությունը ունի ներքին աուդիտի անկախ ստորաբաժանում, որը իրականացնում է Ընկերության ընթացիկ գործունեության անընդհատ վերահսկողություն՝ նվազագույնի հասցնելով Ընկերության աշխատակիցների կողմից պատահական սխալների և չարաշահումների ռիսկը,
- 3) Պատվերների կատարման հստակ քաղաքականության կիրառում,
- 4) Ընկերության և հաճախորդների, ինչպես նաև Ընկերության տարբեր հաճախորդների շահերի բախման սահմանափակման քաղաքականության կիրառումը:
- 5) Մասնակցություն ներդրողների փոխհատուցման, միջոցների երաշխավորման կամ նման այլ սխեմաներում (առկայության դեպքում):


**5.4.2** Ընկերությունն իրավասու է օգտագործել Հաճախորդների միջոցները ի շահ իրեն, եթե դա նախատեսված է Ընկերության և Հաճախորդի միջև կնքված պայմանագրով:

**5.4.3** Եթե Ընկերության և Հաճախորդի միջև կնքված պայմանագրով նախատեսված է, որ Ընկերությունն իրավասու է օգտագործել Հաճախորդի միջոցներն ի շահ իրեն, ապա պայմանագրով պետք է սահմանված լինի նաև.

- 1). միջոցների օգտագործման սահմանաչափերը,
- 2). միջոցների օգտագործման ժամկետները (առկայության դեպքում),
- 3). միջոցների օգտագործման դիմաց Ընկերության կողմից Հաճախորդին վճարման ենթակա գումարի դրույքաչափը, դրա հաշվարկման կարգը և վճարումների իրականացման պարբերականությունը (եթե նման վճարում նախատեսված է):

**5.4.4** Ընկերությունն իրավունք ունի գրավադրելու Հաճախորդի միջոցներն իր անունից միայն վերջինիս հետ կնքված գրավոր համաձայնության հիման վրա:

### **5.5 Բրոքերային ծառայությունների դիմաց գանձվող վճարների գնագոյացման (ձևավորման) սկզբունքները**

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի**

**5.5.1** Բրոքերային գործունեության շրջանակներում մատուցվող ծառայությունների դիմաց Ընկերությունը հաճախորդներից գանձում է վճարներ, որոնց չափը սահմանվում է Ընկերության Վարչության կողմից հաստատված սակագնային սանդղակով՝ ելնելով հետևյալ հիմնական սկզբունքներից.

- 1) միջնորդավճարները պետք է լինեն ճկուն և մրցունակ՝ հաշվի առնելով համեմատելի հանգամանքներում նույնանման ծառայությունների համար գանձվող վճարների մեծությունը.
- 2) միջնորդավճարները պետք է փոխհատուցեն ծառայությունների մատուցման համար Ընկերության կողմից կատարված ծախսերը՝ միաժամանակ ապահովելով շահույթի որոշակի ընդունելի մակարդակ:
- 3) ծառայությունների դիմաց գանձվող վճարի մեծությունը պետք է ընդունելի և մատչելի լինի Հաճախորդի համար և չպետք է հանգեցնի Հաճախորդի ֆինանսական վիճակի էական վատթարացման,
- 4) ծառայությունների դիմաց գանձվող վճարի մեծությունը ուղիղ կախվածության մեջ է Հաճախորդի Հանձնարարականների կատարման բարդությունից, ինչպես նաև դրանց կատարման արդյունքում Հաճախորդի ստացած օգուտի մեծությունից:


**ԳԼՈՒԽ 6 ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**5.5.2** Սույն կարգում փոփոխությունները և լրացումները հաստատվում են Ընկերության Խորհրդի կողմից և ուժի մեջ են մտնում Խորհրդի կողմից սահմանած ժամկետում:

**5.5.3** Սույն կարգում փոփոխություններ (լրացումներ) կատարելու մասին տեղեկացումը Հաճախորդին կատարվում է նշված փոփոխությունները Ընկերության ինտերնետային կայքում տեղակայելու միջոցով, ընդ որում կայքում պարտադիր նշվում է նաև այդ փոփոխությունների տեղակայման ամսաթիվը:

**5.5.4** Սույն կարգում Ընկերության կողմից կատարված բոլոր փոփոխություններն ու լրացումները, որոնք կատարվել են Ընկերության նախաձեռնությամբ և կապված չեն գործող օրենսդրության փոփոխությունների հետ, ուժի մեջ են մտնում և Հաճախորդի համար դառնում են պարտադիր Ընկերության ինտերնետային կայքում տեղակայելուց 10 (տաս) օր հետո:

**5.5.5** Ընկերության կողմից սույն կարգում կատարված բոլոր փոփոխությունները, որոնք կապված են գործող օրենսդրության, առևտրի կազմակերպիչների կանոնների և կանոնակարգերի փոփոխությունների հետ, ուժի մեջ են մտնում վերջիններիս ուժի մեջ մտնելուց հետո:

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի**


**Հավելված 1**

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**  
**ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՃԱԽՈՐԴԻ**  
**ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ՓՈՐՁԻ ՄԱՍԻՆ**

Պահանջվող	Հաճախորդի նշումներ
տեղեկատվություն	
Նշեք այն բրոքերային ծառայությունները, որոնց հետ որևէ կերպ առնչվել եք	
Նշեք այն արժեթղթերով գործարքները և արժեթղթերը, որոնց հետ որևէ կերպ առնչվել եք	
Ձեր կողմից արժեթղթերով կատարված գործարքների բնույթը	
Ձեր կողմից արժեթղթերով կատարված գործարքների ծավալը (<< դրամ)	
Ձեր կողմից արժեթղթերով կատարված գործարքների հաճախականությունը	
Ձեր կողմից արժեթղթերով կատարված գործարքների ժամանակահատվածը, որի ընթացքում կատարվել են այդ գործարքները	
Ձեր կրթական մակարդակը	
Ձեր մասնագիտություն(ներ)ը	

-----  
 (անուն, ազգանուն և/կամ անվանումը)

(ստորագրություն)

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կոդ՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի**

**Հավելված 2**

### ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ


Սույնով ես \_\_\_\_\_, հանդիսանալով <<Յունիբանկ>> ԲԲԸ (անուն, ազգանուն կամ անվանում)

Հաճախորդ՝ համաձայն եմ որակվել որպես պրոֆեսիոնալ հաճախորդ՝ տեղեկացված լինելով, որ տվյալ դեպքում հաճախորդների պաշտպանությանն ուղղված օրենսդրական որոշակի պահանջներ չեն գործում իմ նկատմամբ և այդ պատճառով կորցնում եմ որոշակի պաշտպանվածություն:

Հաճախորդ՝(անուն, ազգանուն կամ իրավաբանական անձի անվանում)  
 (ստորագրություն)

---/-----/----թ.



	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի  
Հավելված 3**

ՊԱՏՎԵՐ N \_\_\_\_\_

Պատվերի տրման ժամանակը (րոպե/ժամ/օր/ամիս/տարի)\_\_\_\_\_

Հաճախորդի հետ կնքված պայմանագրի համարը և ամսաթիվը\_\_\_\_\_

**Գնային պայմանները**

- Շուկայական հանձնարարական
- Գնման լիմիտային հանձնարարական
- Վաճառքի լիմիտային հանձնարարական
- Գնման ստոպ հանձնարարական
- Վաճառքի ստոպ հանձնարարական
- նման ստոպ լիմիտային հանձնարարական
- աճառքի ստոպ լիմիտային հանձնարարական

**Ծավալային պայմանները**


- Բավարարել լրիվ
- Բավարարել մասնակի
- Հանել մնացորդը

**Ժամանակային պայմանները**

- Անմիջապես բավարարել կամ հանել
- Պահել հերթում մինչև բավարարումը

N	Թողարկողի անվանումը	Արժեթղթերի դասը	Արժեթղթերի քանակը	Գինը (միավոր)	Ընդհանուր ծավալ	Գործարքի տիպը (կար•ավորվող/չկար•ավորվող շուկա)	Գործարքի տեսակը (առք, վաճառք)	Հաճախորդի կողմից տրված առանձնա հատուկ ցուցումներ

Սույնով հավաստիացնում եմ նաև, որ ծանոթ եմ Ընկերության պատվերների կատարման քաղաքականությանը և տալիս եմ իմ նախնական համաձայնությունն այդ քաղաքականությունն իմ նկատմամբ կիրառելու վերաբերյալ, ինչպես նաև հավաստիացնում եմ, որ Ընկերությունը պատշաճ ձևով ներկայացրել է արժեթղթերում ներդրումների հետ կապված ռիսկերի վերաբերյալ բավարար տեղեկատվություն և համաձայն եմ կրել սույն պատվերի հետ կապված բոլոր ռիսկերը:

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի**

Հաճախորդ \_\_\_\_\_

Բրոքեր՝ \_\_\_\_\_


(անուն, ազգանուն /անվանումը)

(ստորագրություն)


(անուն, ազգանուն) (ստորագրություն)

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կոդ՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի**

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կոդ՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի  
Հավելված 4**

**<<Յունիբանկ>> ԲԲԸ  
Վարչության նախագահ  
պրն Վ. Աթայանին**

### Դիմում


Խնդրում եմ չեղյալ համարել իմ կողմից \_ \_ /\_ \_/ \_ \_ \_ ներկայացված թիվ \_\_\_\_ արժեթղթերի  
գնման/վաճառքի պատվերը:

Դիմող՝ \_\_\_\_\_


(ստորագրություն)

(անուն, ազգանուն /անվանումը)

\_ \_ /\_ \_/ \_ \_ \_թ.

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կոդ՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի**

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի  
Հավելված 5**

**ՊԱՏՎԵՐ N \_  
(արժեթղթերի գնման/վաճառքի հետ կանչման, փոփոխություն կատարելու)**

Պատվերի տրման ժամանակը \_\_\_\_\_

(րոպե/ժամ/օր/ամիս/տարի)

Հաճախորդի հետ կնքված պայմանագրի համարը և ամսաթիվը \_\_\_\_\_

**Գնային պայմանները**

- Շուկայական հանձնարարական
- Գնման լիմիտային հանձնարարական
- Վաճառքի լիմիտային հանձնարարական
- Գնման ստոպ հանձնարարական
- Վաճառքի ստոպ հանձնարարական
- Գնման ստոպ լիմիտային հանձնարարական
- Վաճառքի ստոպ լիմիտային հանձնարարական

**Ծավալային պայմանները**


- Բավարարել լրիվ
- Բավարարել մասնակի
- Հանել մնացորդը

**Ժամանակային պայմանները**

- Անմիջապես բավարարել կամ հանել
- Պահել հերթում մինչև բավարարումը

N	Թողարկողի անվանումը	Արժեթղթերի դասը	Արժեթղթերի քանակը	Գինը (միավոր)	Ընդհանուր ծավալ	Գործարքի տիպը (կարգավորվող/չկարգավորվող շուկա)	Գործարքի տեսակը (առք, վաճառք)	Հաճախորդի կողմից տրված առանձնահատուկ ցուցումներ

Սույնով հավաստիացնում եմ նաև, որ ծանոթ եմ Ընկերության պատվերների կատարման քաղաքականությանը և տալիս եմ իմ նախնական համաձայնությունն այդ քաղաքականությունն իմ

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կոդ՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	


**Ընդհանուր հասանելի**

նկատմամբ կիրառելու վերաբերյալ, ինչպես նաև հավաստիացնում եմ, որ Ընկերությունը պատշաճ ձևով ներկայացրել է արժեթղթերում ներդրումների հետ կապված ռիսկերի վերաբերյալ բավարար տեղեկատվություն և համաձայն եմ կրել սույն պատվերի հետ կապված բոլոր ռիսկերը:

Հաճախորդ \_\_\_\_\_ Բրոքեր՝ \_\_\_\_\_

(անուն, ազգանուն /անվանումը) (ստորա•րություն) (անուն, ազգանուն) (ստորագրություն)

\_\_\_\_\_

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կոդ՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի  
ՀԱՎԵԼՎԱԾ 6**

**Գործարքի վավերագիր N \_\_\_\_\_**

**Վավերագրի լրացման ժամանակը (րոպե/ժամ/օր/ամիս/տարի) \_\_\_\_\_**

**Պատվեր N \_\_\_\_\_**


N	Թողարկողի անվանումը	Արժեքի դասը	Գործարքի կնքման ժամանակը (րոպե/ժամ/օր /ամիս/տարի)	Գործարքի տիպը (բորսայական / արտաբորսայական)	Գործարքի տեսակը (առք, վաճառք)	Գնված կամ վաճառված արժեթղթերի քանակը և ընդհանուր գումարը	Մեկ արժեթղթի գինը	Հանդիպակաց կողմի անվանումը կամ գործարքի համար հիմք հանդիսացած փաստաթղթի համարը և ամսաթիվը	Գործարքի կատարման (վերջնահաշվարկի) պայմանները

Բրոքեր՝ \_\_\_\_\_  
 (անուն, ազգանուն) (ստորագրություն)

<< \_\_\_ >> << \_\_\_\_\_ >> 201\_\_ թ.

**Հավելված 7**



	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կոդ՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

Ընդհանուր հասանելի

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
**Պատվերով գործարքի կնքման վերաբերյալ**

(Ներդրումային ընկերության անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը)


Հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը) կամ նույնականացնող համարը

Պատվերում նշված գործարքի տեսակը (առք, վաճառք) կամ պատվերի բնույթը	Պատվերի տեսակը	Գործարքի կնքման վայրը	Գործարքի կնքման ամսաթիվը/ժամը (տարի/ամիս/օր/ժամ/րոպե)	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը, թողարկման համարը (բացակայության դեպքում՝ թողարկողի անվանումը և արժեթղթի տեսակը)	Գործարքի առարկա հանդիսացած արժեթղթերի քանակը	Մեկ արժեթղթի գինը	Գործարքի ընդհանուր գումարը	Գանձվող միջնորդավճարի մեծությունը	Հաճախորդի կողմից վճարումները կատարելու պայմանները և ժամկետը, եթե դրանց մասին նա նախօրոք չի տեղեկացվել	Նշում, եթե գործարքի մյուս կողմը հանդես է եկել Ընկերությունը, վերջինիս խմբի մեջ •տնվող որևէ անձ, կամ Ընկերության մեկ այլ հաճախորդ, բացառությամբ եթե •ործարքն իրականացվել է այնպիսի կարգավորվող շուկայում, որն ապահովում է գործարքի մի կողմի անհայտ լինելը մյուսի համար

Վարչության նախագահ՝ \_\_\_\_\_

(անուն, ազգանուն) (ստորագրություն)

<<\_\_\_\_>> <<\_\_\_\_\_>> 201\_\_ թ.

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կոդ՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի  
Հավելված 8**

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**Պատվերով կատարված գործարքների վերաբերյալ**

\_\_\_\_\_  
 (Ներդրումային ընկերության անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը)


\_\_\_\_\_/\_\_\_\_\_/\_\_\_\_\_  
 հաշվետու ժամանակաշրջանի սկիզբը (օր/ամիս/տարի)

\_\_\_\_\_/\_\_\_\_\_/\_\_\_\_\_  
 հաշվետու ժամանակաշրջանի վերջը (օր/ամիս/տարի)

N	Գործարքի տեսակը (առք, վաճառք)	Թողարկողի անվանումը	Արժեթղթերի դասը	Գործարքի առարկա հանդիսացած արժեթղթերի քանակը	Մեկ արժեթղթի գինը	Գործարքի ընդհանուր գումարը	Գործարքի կնքման ամսաթիվը (տարի/ամիս/օր/)	Գանձվող միջնորդավճարի մեծությունը	Գործարքի կատարման (վերջնահաշվարկի) պայմանները

Վարչության նախագահ՝ \_\_\_\_\_  
 (անուն, ազգանուն) (ստորագրություն)

<<\_\_>> <<\_\_\_\_\_>> 201\_\_ թ.

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կոդ՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի  
Հավելված 9**

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**Հաճախորդի արժեթղթերով և դրամական միջոցներով հաշիվների շարժի վերաբերյալ**

\_\_\_\_\_  
 (Ներդրումային ընկերության անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը)


-----/-----/-----  
 հաշվետու ժամանակաշրջանի սկիզբը (օր/ամիս/տարի)

-----/-----/-----  
 հաշվետու ժամանակաշրջանի վերջը (օր/ամիս/տարի)

N	Հաճախորդի հաշվի տեսակը (արժեթղթերի, դրամական միջոցների) և համարը	Ամսաթիվը (օրը/ամիսը/տարին)	Գործարքի, որի հիման վրա կատարվել է արժեթղթերի և/կամ դրամական միջոցների շարժը, հերթական համարը գործարքների վերաբերյալ պարբերական հաշվետվությունում	Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում մուտքերը	Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ելքերը	Հաշվետու ժամանակաշրջանի վերջում հաշվի մնացորդը

Վարչության նախագահ՝ \_\_\_\_\_  
 (անուն, ազգանուն) (ստորագրություն)


<< \_\_\_ >> \_\_\_\_\_ >> 201\_\_ թ.

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կող՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի**

**Հավելված 10**

Արտարժույթային Գործարքի Պատվեր				
Պայմանագրի N	Պայմանագրի ամսաթիվը	Հաճախորդի ծածկագիրը		
Պատվեր N_____	րոպե/ժամ/օր/ամիս/տարի		/////	
Գնվող արժույթը				
Վաճառվող արժույթը				
Վաճառվող արժույթի գումարը				
Գնվող արժույթի գումարը				
Պատվերի բավարարման գնային պայմաններ (լրացվում է, եթե Պատվերը Ներքին գործարքի կնքման պատվեր չէ)	Շուկայական	Սահմանափակ		Ստոպ
	Փոխարժեքը (գնվող արժույթի միավորի դիմաց վճարման ենթակա վաճառվող արժույթի գումարը)			Ստոպ լիմիտային
Հաճախորդի կողմից տրված առանձնահատուկ ցուցումները Հաճախորդի կողմից տրված առանձնահատուկ ցուցումները				
Գործարքի բնույթը	Բորսայական գործարք		Արտաբորսայական գործարք	
Գնված արտարժույթը պետք է	Վերադարձվի Հաճախորդին		Թողնվի Հաճախորդի հաշվի վրա	
Այլ ցուցումներ				
Հաճախորդ (ստորագրություն)	Սույնով հավաստիացնում եմ, որ ծանոթ եմ ընկերության Պատվերների կատարման ընթացակարգին և տալիս եմ իմ նախնական համաձայնությունն		Բրոքեր (ստորագրություն)	

	Բրոքերային գործառնությունների իրականացման կարգ	Կոդ՝ 21.02.1	Խմբագրություն՝ 3.4
		Հաստատված է Բանկի Խորհրդի 28.12.2021թ. որոշմամբ	

**Ընդհանուր հասանելի**

	այդ քաղաքականությունն իմ նկատմամբ կիրառելու վերաբերյալ:		
	✓		